ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<26>> ապրիլի 2013թ. N 194

Ք.Արմավիր

## *ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Ջիվանու փողոցի N17 շենքի N25 բնակարանի բնակիչ Սահակ Աբգարյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2013 թվականի ապրիլի 18-ի եզրակացությունը:

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Սահակ Աբգարյանին հատկացնել 70000 /յոթանասուն հազար/ դրամ միանվագ օգնություն դստեր՝ Կարինե Աբգարյանի ուսման վարձի վճարման նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ.Կարապետյանին/՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը <<Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան >> Արդշինինվեստբանկ ՓԲԸ հ/հ 2470101097150010 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ